ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ

Կոռուպցիան լուրջ մարտահրավեր է ամբողջ աշխարհում: Այն խոչընդոտում է երկրների քաղաքական, տնտեսական ու սոցիալական զարգացումները և խաթարում է հանրային վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ:

Դեկտեմբերի 9-ը նշվում է որպես Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր: Սա առիթ է ընդգծելու կոռուպցիայի կործանարար դերը և դրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը, անդրադարձ կատարելու անցնող տարվա ձեռբերումներին և բացթողումներին, վերլուծելու խնդիրները և նախանշելու անելիքներն այդ շարունակական պայքարում:

Ներկայում գլոբալ մակարդակում տեղի ունեցող հակաժողովրդավարական զարգացումները լայն հնարավորություններ են ստեղծում կոռուպցիայի աճի և տարածման համար: Այս նկատառումով բազմապատիկ կարևոր են ժողովրդավարության ուղի ընտրած պետությունների հակակոռուպցիոն պայքարի արդյունքները և այդ չարիքին դիմակայելու կարողությունը:

ՀՀ կառավարության և հակակոռուպցիոն մասնագիտական մարմինների կողմից կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ իրականացվում են բազում միջոցառումներ, որոնք միտված են 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված գործողությունների ծրագրի իրականացմանը: Իրավապահ մարմինների վարույթում են մեծաթիվ քրեական գործեր, որոնց մեջ ներգրավված են ինչպես 2018 թվականի հեղափոխությունից առաջ, այնպես էլ դրանից հետո պաշտոնավարող բարձրաստիճան անձինք: Ավելանում են ապօրինի ծագում ունեցող գույքի վերականգնման դեպքերը և ծավալները: Կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված են բոլոր հակակոռուպցիոն ինստիտուտները, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, գործարարներ, քաղաքացիական հասարակության դերակատարներ, լրատվամիջոցներ:

Միաժամանակ, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հետազոտությունների արդյունքները շատ հուսադրող չեն:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման համաթվի[1] համաձայն՝ Հայաստանը 2023 թվականին ստացել է 47 միավոր: Նախորդ տարվա համեմատ այն արձանագրել է մեկ միավորի բարելավում վիճակագրական սխալի սահմաններում, ինչը 2018-19 թվականներին տեղի ունեցած թռիչքային աճի և ձևավորված ակնկալիքների համեմատ, ավելի շուտ, լճացում է և թերևս պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրականացվող բարեփոխումների անբավարար արդյունքներով:

ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) 2024 թվականի սեպտեմբերին իրականացրած տնային տնտեսությունների կարծիքի ուսումնասիրության[2] արդյունքներով հարցվածների միայն 3%-ն է կոռուպցիան նշել որպես առաջին կամ երկրորդ հիմնական խնդիր,

---

[1] https://transparency.am/hy/cpi

[2] https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia/

որը 13-րդն է խնդիրների ցանկում, ինչը որոշ առումով դրական է: Կոռուպցիայի դեմ պայքարը՝ որպես կառավարության վերջին վեց ամիսների ամենամեծ ձեռքբերում է համարել ընդամենը 2%-ը, թեև միաժամանակ այդ պայքարում առաջընթացի բացակայությունը՝ որպես ամենամեծ ձախողում է համարել 3%-ը (երկու դեպքում էլ՝ առաջին կամ երկրորդ պատասխան): Կարելի է արձանագրել, որ կոռուպցիան Հայաստանում հանրության կողմից առաջնային խնդիր չի դիտվում: Միաժամանակ՝ առանձնապես արդյունավետ չեն համարվում կոռուպցիայի դեմ պայքարում կառավարության կողմից ներդրվող ջանքերը:

Այս ընկալումները, մի կողմից, կարող են պայմանավորված լինել հակակոռուպցիոն ինստիտուտների աշխատանքի անարդյունավետությամբ և շոշափելի արդյունքների անբավարարությամբ: Առկա զգալի ծանրաբեռվածության պայմաններում հակակոռուպցիոն մարմինների մարդկային ռեսուրսներն ու կարողությունները բավարար չեն իրենց առջև դրված հավակնոտ խնդիրները պատշաճ իրականացնելու համար: Վարչական ու քրեական վարույթները, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը, դատական գործընթացները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և պետության վնասի վերականգնման գործընթացները դանդաղ են ընթանում: Բավարար տեսանելի չէ կոռուպցիայի և ապօրինի հարստացման պատժելիությունը հատկապես հանրահայտ ու աղմկահարույց գործերով:

Մյուս կողմից, հանրությանն անհանգստացնում է կոռուպցիայի դեմ պայքարում իրավասու պետական մարմինների հնարավոր ընտրողական մոտեցումը: Մասնավորապես, լրագրողական հետաքնությունների բացահայտումների հիման վրա իշխող քաղաքական ուժը ներկայացնող պաշտոնյաների նկատմամբ հետապնդումներ չեն իրականացվում, իրականացման պարագայում՝ բավարար չեն լուսաբանվում, և խնդրահարույց արարքների ու դրսևորած վարքագծի համար պատասխանատվության ենթարկելու քայլերը տեսանելի չեն:

2024 թվականի լրագրողական հետաքննությունները բացահայտել են պաշտոնատար անձանց կողմից շահերի բախման իրավիճակներում որոշումների կայացման, կուսակցության ֆինանսների ապօրինի հավաքագրման , գնումների գործընթացներում հնարավոր պայմանավորվածությունների, պետական բյուջեի չհիմնավորված ծախսերի և այլ բազմաթիվ խնդրահարույց դեպքեր: Նշված դրսևորումների զգալի մասը տեղի է ունենում իշխող կուսակցության ներկայացուցիչների ներգրավմամբ, սակայն դրանք պատշաճ, առնվազն արագ ու տեսանելի ընթացք չեն ստացել համապատասխան մարմինների, այդ թվում՝ իրավապահ համակարգի կողմից: Դեռևս մեղադրանք չի առաջադրվել Երևանի ընտրություններին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավին մասնակցելուն գումարով շահագրգռելու մեջ ներգրավված անձանց: Խիստ խնդրահարույց են տեղական ինքնակառավարման մարմինների շուրջ ստեղծված իրավիճակը և դրանց նկատմամբ անհասկանալի ու հակասական միջամտությունները, մասնավորապես՝ Գյումրիում կամ Վանաձորում: Հարցեր են առաջացնում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կամ Ազգային ժողովի պատգամավորների հրաժարականների, ինչպես նաև այդ պաշտոնյաների անկախ որոշումների վրա արտաքին ներգործության իրավաչափության վերաբերյալ: Այսպիսի զարգացումների համատեքստում ավելի քան խնդրահարույց են «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում կուսակցությունների ֆինանսավորմանն առնչվող փոփոխությունները, որոնց արդյունքում ամրապնդվելու են միակուսակցական ու մենիշխանական համակարգի հիմքերը,

իսկ քաղաքականությունը կրկին հայտնվելու է մասնավոր և օլիգարխիկ շահերի տիրույթում՝ փաստացի վերադարձնելով Հայաստանը մինչև 2018 թվականը տիրող իրավիճակին:

ՀՀ կառավարության կողմից հավակնոտ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանը զուգահեռ ի հայտ եկող նորանոր կոռուպցիոն դրսևորումները, միակուսակցական համակարգի կոնսոլիդացումը, փոխզսպումների և հակակշիռների համակարգի փաստացի բացակայությունը լրջագույն մարտահրավերներ են, որոնք սպառնալիք են ժողովրդավարությանը և իրավունքի գերակայությանը և խորացնում են հանրային ինստիտուտների նկատմամբ անվստահությունը:

Հաշվի առնելով իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ ժողովրդավարության ամրապնդմանն ու կոռուպցիայի նվազեցմանն ուղղված հանձնառությունները՝ ակնկալվում է, որ այն կդրսևորի քաղաքական կամք ու հետևողականություն և պատշաճ կարգով ու ժամկետում կհասցեագրի մատնանշված խնդիրները: